

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2016թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), իր որդեգրած քաղաքականությանը համաձայն շարունակեց մատուցել, հաճախորդների պահանջմունքներին համապատասխան ծառայություններ:

2016 թվականին ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացման պայմաններում Բանկն ապահովեց իր գործունեության կայունությունն ու հիմնական ցուցանիշների դրական դինամիկան, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում՝ Բանկի մենեջմենթի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:

2016 թվականի ընթացքում Բանկը շարունակեց միջազգային ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցությունը, ինչի շնորհիվ Բանկը շարունակեց շուկայում ներկայացնել մատչելի և երկարաժամկետ վարկեր: 2016 թվականի ընթացքում ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում Բանկն իր հիմնական գործընկերներից ներգրավեց շուրջ 28 մլն. ԱՄՆ դոլար՝ բիզնեսի վարկավորման նպատակով: Հաշվի առնելով Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և պրոդուկտների կատարելագործման և դրանց նորացման անհրաժեշտությունը՝ Բանկը 2016 թվականին ներկայացրեց հաճախորդների պահանջմունքներին համահունչ ծառայություններ և պրոդուկտներ: 2016 թվականին Բանկը ձեռնարկեց մարքեթինգային ակտիվ միջոցառումներ, որոնց արդյունքում զգալի աճ արձանագրվեց Բանկի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների վաճառքում, այդ թվում՝ արագ դրամական փոխանցումների, կոմունալ վճարումների, ապահովագրական պոլիսների վաճառքի և տեխնիկական գնության կտրոնների վաճառքի:

Արագ դրամական փոխանցումների շուկայում առաջատարի իր դիրքերը պահպանելու և ամրապնդելու նպատակով Բանկը 2016 թվականին անդամակցեց MoneyTun միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգին, որը հնարավորություններ է ընձեռում փոխանցումներ իրականացնել՝ ԱՄՆ-ից Հայաստան և Հայաստանից դեպի ԱՄՆ-ը:

SWIFT հեռահաղորդակցման համակարգով փոխանցումների բարձր՝ 100%-անոց որակ ապահովելու համար Բանկն արդեն չորրորդ անգամ գերմանական Commerzbank AG-ի կողմից արժանացել է «Որակի գերազանցություն» (Excellent STP Quality Award) մրցանակին: Բանկը նշված ցուցանիշն ապահովվել է ավտոմատ կերպով փոխանցումների արագ մշակման և շահառուին առավելագույն կարճ ժամկետում այն հասանելի դարձնելու շնորհիվ:

Global Finance միջազգային հեղինակավոր ամսագիրը Բանկին 2016 թվականի գործունեության համար ճանաչեց Հայաստանի «Առևտրի լավագույն ֆինանսավորող» բանկը՝ հաշվի առնելով 2016 թվականի ընթացքում Բանկի կողմից իրականացրած գործարքների ծավալը, աշխարհագրական ընդգրկման շրջանակը, հաճախորդների սպասարկման բարձր մակարդակը, մրցակցային գնագոյացումը և Բանկում ներդրված նորագույն տեխնոլոգիաները:

Բանկը, կարևորելով վարկային պրոդուկտների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը, 2016 թվականին վարկային պորտֆելում ավելացրեց գյուղատնտեսական և հիփոթեքային ծրագրերով տրամադրվող վարկերի ծավալները:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն Միջազգային առևտրի խթանման ծրագրի (TFP) շրջանակներում հինգերորդ անգամ ճանաչվեց «ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում», ինչը վկայում է, որ Բանկը զարգանում է ճիշտ ուղղությամբ, և Բանկի մատուցած ծառայությունները համապատասխանում են համաշխարհային բարձր վարկանիշ ունեցող ՎՋԵԲ-ի պահանջներին:

2016 թվականին ՀՀ առևտրային բանկերի համար առկա էր նաև ամենակարևոր մարտահրավերը՝ 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն չափի 30 մլրդ. ՀՀ դրամի ապահովումը:

Նշված մարտահրավերի պայմաններում Բանկը համալրեց իր կապիտալը 8.5 մլրդ. ՀՀ դրամով՝ ապահովելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի պահանջը:

2016 թվականին Բանկը ՀՀ-ում իրականացրեց կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի թվով երեք նոր թողարկումներ 2 մլն. ԱՄՆ դոլար և 400 մլն. ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

2016 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը, բարձրացվեց սպասարկվող վճարային քարտերի անվտանգության մակարդակը:

Հաշվի առնելով, որ Բանկի հաջողություններում էական մասնակցություն է ունենում Բանկի անձնակազմը, Բանկի ղեկավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործման, առաջխաղացման և մոտիվացման գործընթացին:

2016 թվականի ընթացքում Բանկը վերանայեց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին և պահանջներին համապատասխանեցրեց Բանկի ներքին իրավական ակտերը, ինչպես նաև դրանցում ներառեց միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա նոր մոտեցումները:

Բանկի 2016 թվականի գործունեության հիմնական ցուցանիշները.

հազ. ՀՀ դրամ

Թիվ	Ցուցանիշի անվանումը	01.01.2016 թվ.	01.01.2017 թվ.	Աճ (+), նվազում (-)
1	Ակտիվներ	133,359,035	217,247,689	83,888,654
2	Փաստացի լրացված կանոնադրական կապիտալ	8,335,385	16,835,400	8,500,015
3	Հաճախորդներին տրված վարկեր	67,741,829	106,101,116	38,359,287
4	Մասնաճյուղային ցանց, /հատ/	51	65	14
5	Բանկումատներ, /հատ/	91	123	32
6	Անձնակազմ, աշխատողներ	672	913	241
7	Կորպորատիվ հաճախորդներ	4,715	6,374	1,659
8	Ֆիզիկական անձ-հաճախորդներ	112,517	137,699	25,182
9	Պլաստիկ քարտեր, /հատ/	133,033	150,735	17,702

Բանկը 2016 թվականի ընթացքում շարունակեց իր տարածքների ընդլայնման քաղաքականությունը, որի արդյունքում Բանկն ավելացրեց իր մասնաճյուղային ցանցը թվով 4 նոր մասնաճյուղերով՝ մասնաճյուղերի թիվը հասցնելով 55-ի, ինչպես նաև իրականացվեցին մի շարք մասնաճյուղերի արդիականացման ծրագրեր: «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու արդյունքում Բանկի մասնաճյուղային ցանցն ընդլայնվեց թվով 10 նոր մասնաճյուղերով՝ ՀՀ բանկային համակարգում մասնաճյուղային ցանցի մեծությամբ դառնալով երրորդ խոշորագույն բանկը:

Բանկի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից բխող պլանավորվող ժամանակահատվածի համար ռազմավարական հիմնական խնդիրներն են հանդիսացել.

1. Բանկի մասնաճյուղային ցանցի աշխարհագրական ընդլայնումը և մասնաճյուղերի արդիականացումը,
2. աշխատողների մասնագիտական գիտելիքների կատարելագործումը, սպասարկման որակի շարունակական բարելավումը,
3. Բանկում նոր համակարգերի և պրոդուկտների ներդրումը, կատարելագործումը, ինչպես նաև մարքեթինգային միջոցառումների իրականացումը,
4. միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը,
5. Բանկի շահույթի և ընդհանուր կապիտալի շարունակական աճի ապահովումը,
6. ակտիվների և կապիտալի եկամտաբերության մակարդակի ապահովումը, բաժնետոմսերի շուկայական արժեքի աճի նպաստումը:
7. Բանկի զարգացման աճի տեմպի պահպանումը և ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրքերի գրավումը:

2016 թվականի ընթացքում Բանկի կողմից ներդրումային, ինչպես նաև ֆինանսական քաղաքականության համադրման, ընդհանուր բանկային ռիսկերի կառավարման, ինչպես նաև արտաքին միջավայրի փոփոխությունների ազդեցությունների կանխատեսմամբ՝ Բանկը նվազեցրեց եկամտաբերության ցուցանիշների նվազման տեմպը և տարին ամփոփեց ավելի քան 1 մլրդ. ՀՀ դրամ զուտ շահույթի ցուցանիշով:

Ստացված արդյունքի հիման վրա հաշվարկված Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները հետևյալն են.

*Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 4.1%,  
Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 0.7%:*

Հաշվետու ֆինանսական տարում Բանկի զուտ շահույթը կազմել է 1,089,475 հազ. ՀՀ դրամ:

### **Ռիսկերի կառավարումը**

Բանկում ռիսկերի կառավարմանը տրվում է առանձնահատուկ նշանակություն, մշակվել և շարունակական բնույթ է կրում նոր իրավական ակտերի ընդունումը՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:

Բանկային ռիսկերից առավել կարևորվում են հետևյալ հինգ խմբերը.

- վարկային,
- իրացվելիության,
- արտարժույթային,
- տոկոսադրույքների փոփոխման,
- գործառնական:

Բանկը ռիսկերի կառավարում իրականացնում է՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից.

1. Ռիսկերի գնահատումն իրականացվում է անկախ ստորաբաժանման կողմից, ինչը բացառում է շահերի բախումը:

2. Ռիսկերը նույնականացվում և կանխարգելվում են մինչ դրանց ի հայտ գալը կամ ի հայտ գալու վաղ շրջանում:

3. Ռիսկերի կառավարումն իրականացվում է հաշվի առնելով բանկի երկարաժամկետ ռազմավարությունը, ինչպես նաև երկրի ֆինանսատնտեսական վիճակը:

4. Բանկի կոլեգիալ մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասություններն ու պարտականությունները հստակ տարանջատված են:

5. Ռիսկերի կառավարումն իրականացվում է միասնական՝ դիտարկելով բոլոր ռիսկերը միմյանց հետ փոխկապված:

6. Ռիսկերի զսպման նպատակով գործում է սահմանաչափերի համակարգը:

Ռիսկերի կառավարման գործընթացը կորդինացնում են Խորհուրդը և Գործադիր մարմինը, իսկ ընթացիկ կառավարումն իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության, Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի, Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի, վարկային կոմիտեների և բանկի այլ ստորաբաժանումների կողմից:

Ռիսկերի կառավարման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացվում է բանկի էտրիքի կողմից:

Բանկի գործադիր մարմինն իրականացնում է ռիսկերի կառավարման գործընթացի նկատմամբ հսկողություն, ինչպես նաև հաստատում է վերջինիս վերաբերող իրավական ակտեր:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը զբաղվում է իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման հարցերով:

Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի գնահատման և վերլուծության համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման բնագավառը կարգավորող ներքին իրավական ակտերի մշակման համար:

### **Վարկային ռիսկ**

Բանկում վարկային ռիսկը կառավարվում է առանձին վարկառուների և վարկային փաթեթի մակարդակներով: Վարկառուների գծով ռիսկի կառավարումն իրականացվում է ինչպես իրավաբանական և ֆիզիկական անձանց, այնպես էլ՝ ֆինանսական շուկայի մասնակիցների նկատմամբ:

Բանկում ներդրված վարկային ռիսկի կառավարման առարկա են հանդիսանում վարկային պորտֆելը և հետհաշվեկշռային վարկային ռիսկ կրող գործառնությունները: Վարկային ռիսկի կառավարման մեխանիզմներից է՝ վարկային ռիսկի ընդունման հետ կապված որոշումներ կայացնող կոլեգիալ մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունների ու պարտականությունների հստակ բաշխումը և տարանջատումը:

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- Վարկային ռիսկի սահմանափակում՝ Բանկում գործող սահմանաչափերի միջոցով:
- Վարկային ռիսկի նկատմամբ հսկողություն՝ վարկառուների գնահատման միջոցով ինչպես վարկային պորտֆելի, այնպես էլ առանձին վարկառուների և ապահովության միջոցների նկատմամբ մոնիտորինգի իրականացման միջոցով:
- Վարկային ռիսկի կանխարգելում վարկային գործերը քննարկելու փուլում և համապատասխան միջոցառումների կիրառում հետագա մոնիտորինգի ժամանակ ռիսկի գործոնների հայտնաբերման դեպքում:
- Ապահովվածության միջոց հանդիսացող գույքի պարբերաբար գնահատում:

Բանկը տնտեսության փոփոխություններին համահունչ փոփոխում է վարկային ռիսկի կառավարման իր մոտեցումները, իրականացնում է սթրես թեստեր, հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունն ինչպես առանձին վարկառուների, այնպես էլ վարկային փաթեթի ռիսկի մակարդակի վրա:

### **Իրացվելիության ռիսկ**

Բանկում իրականացվում է ընթացիկ, կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիության ռիսկի կառավարում:

- Բանկի իրացվելիության երկարաժամկետ կառավարումն իրականացվում է՝ Բանկի վարչության կողմից ռեսուրսների ներգրավման և միջոցների տեղաբաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելով:

- Իրացվելիության ռիսկի կարճաժամկետ կառավարման գործառույթներն իրականացնում է Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը, որը կանխատեսված դրամական հոսքերի ճեղքվածքի դեպքում, համապատասխան միջոցներ է ձեռնարկում լրացուցիչ միջոցներ ներգրավելու կամ ավելցուկային իրացվելիությունը տեղաբաշխելու ուղղությամբ: 2016թ. ընթացքում տեղի է ունեցել Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի 12 նիստ, որի ժամանակ հաստատվել է նաև ընդհանուր բազային տոկոսադրույքը՝ ըստ արժույթների:

Իրացվելիության ռիսկի ընթացիկ կառավարումն իրականացվում է Բանկի Գործադիր տնօրենի տեղակալի կողմից՝ փողի շուկայի գործիքակազմի կիրառմամբ: Իրացվելիության ռիսկի շրջանակներում Բանկը կարևորում է նաև վարակի ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ՀՀ բանկային համակարգում որևէ Բանկի սնանկացման հետևանքով:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման ընթացքում պահպանվում են Բանկի Խորհրդի կողմից սահմանված սահմանաչափերն, ինչպես նաև պարբերաբար իրականացվում են սթրես թեստեր:

### **Տոկոսադրույքի ռիսկ**

Բանկում ներդրված տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում տոկոսադրույքի ճեղքվածքի, ինչպես նաև արժեթղթերի պորտֆելի դյուրացիայի հաշվարկը, որի արդյունքում հաշվարկվում է տոկոսադրույքի փոփոխության հետևանքով Բանկի կողմից հնարավոր կորուստների չափը:

Տոկոսադրույքի ռիսկի սահմանափակման համար գործում են Բանկի Խորհրդի կողմից սահմանված սահմանաչափեր, որոնց նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը:

Բանկում ներդրվել է միջազգային փորձին համապատասխան տոկոսադրույքի ռիսկի վերաբերյալ վերլուծությունների և սթրես թեստերի իրականացման ճկուն ու արդիական համակարգ:

### **Արտարժույթային ռիսկ**

Բանկում ներդրված Արտարժույթային ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներն են.

↳ Արտարժույթային դիրքի կառավարում, որն իրականացվում է բաց դիրքի նկատմամբ՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերը պահպանելով:

↳ Արտարժույթային պարտավորությունները ձևավորվում են՝ ելնելով արտարժույթային ակտիվների նկատմամբ պահանջարկից:

↳ Սթրես թեստերի իրականացում, ինչն իրականացվում է հաշվի առնելով արտարժույթի փոխարժեքի տատանման, ինչպես նաև դիրքի փոփոխության տարբեր սցենարներ:

Օրական կտրվածքով արտարժույթային ռիսկի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը համապատասխան հաշվետվություն է ներկայացնում Բանկի ղեկավարությանը:

Արտարժույթային ռիսկի գնահատման հիմնական մեթոդն է ՎաՌ-ի հաշվարկը (որոշակի հավանականությամբ արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով Բանկի կրեդիթ վնասը), ինչն իրականացվում է ամսական կտրվածքով:

### Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը, Բանկի գործունեության կազմակերպման ընթացքում օգտագործվող տեխնոլոգիաների, տեղեկատվական համակարգի, աշխատակիցների ոչ համարժեք գործողությունների կամ սխալների, ինչպես նաև արտաքին միջավայրի ազդեցության հետևանքով, Բանկի կողմից վնասներ կրելու ռիսկն է:

Բանկում ներդրված գործառնական ռիսկերի կառավարման համակարգի համաձայն գործառնական ռիսկի նույնականացման համար յուրաքանչյուր ստորաբաժանումում ընտրված է պատասխանատու աշխատող:

Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի նպատակն է գործառնական ռիսկի դեպքերից բխող ռիսկերի ի հայտ գալու զսպմանն ուղղված միջոցառումների կիրառումը կամ դրանց վերաբերյալ առաջարկների ներկայացումը:

Գործառնական ռիսկերի գնահատման և մոնիտորինգի համար Բանկում գործում է ռիսկային պատահարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համակարգը: Գործառնական ռիսկերի գնահատումն իրականացվում է առկա և պոտենցիալ վնասի հաշվարկման, ինչպես նաև ռիսկերի քարտեզի միջոցով:

Բանկում, կարևորելով գործառնական ռիսկի զսպման և արդյունավետ կառավարման հանգամանքները, մշտապես քննարկվում են գործառնական ռիսկի կառավարման կատարելագործման նոր մոտեցումների ներդրման հարցերը:

Բանկում ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2016 թվականին Բանկի կողմից մշակվեց և հաստատվեց Ռիսկերի կառավարման ռազմավարությունը, որի շրջանակներում պլանավորված է իրականացնել համակարգային միջոցառումներ, մասնավորապես.

- ☞ Ռիսկերի կառավարման վարչության կառուցվածքի վերանայում՝ վարչության կազմում վարկային, շուկայական (իրացվելիության) և գործառնական ռիսկերի կառավարման համար առանձին ստորաբաժանումների ստեղծում,
- ☞ Վինտաժ վերլուծության մեթոդաբանության մշակում և իրականացում,
- ☞ Սկորինգային համակարգի ներդրում սպառողական քարտային վարկերի համար,
- ☞ Սկորինգային համակարգի ներդրում միկրո և փոքր վարկերի համար,
- ☞ Ռիսկերի վրա հիմնված գնագոյացման նոր մեթոդների կիրառում,
- ☞ Գործընկեր բանկերի ռիսկի գնահատման երկարաժամկետ սահմանաչափեր հաստատելու նոր մեթոդների կիրառում,
- ☞ Ռիսկերի վրա հիմնված մոնիտորինգի իրականացման գործառույթի ներդրում,
- ☞ Իրացվելիության վրա ազդող սթրես թեստերի նոր մոտեցումների ներդրում և
- ☞ Օպցիոնային ռիսկի գնահատման նոր մոտեցման կիրառում:

ԱՐԱՐԱՐՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամներ՝

Վ. Ղազարյան



Ա. Սուվարյան

